(1) Որոշիր կարիքը կամ հիմնախնդիրը

Գյուտարար դառնալու համար առաջին հերթին անհրաժեշտ է ինչ-որ նոր բանի մրահղացում, ոգեշնչում:

Քեզ պե՞տք է ավելի լավ արտադրանք, քան այն, ինչ կարող ես գտնել շուկայում:
Նայարնագործիր այն:

Կարո՞ղ ես մրաժել ինչ-որ բան, որն ավելի կհեշտացնե՞ր այդ գործը քո կամ որեւէ մեկի համար, որին ճանաչում ես: Նայարնագործիր այն:

Երիտասարդ գյուտարարի նկարագրություն. Սերջիո Մեզա, Էդուարդո Գոնչալվեզ եւ Ալեխանդրո Մաուրերիա

Չիլիի այս երիտասարդ եւ պարանի գյուտարարները ցանկանում էին իրենց երկրի չորային հյուսիսային մասի համար ավելի շար թարմ ջուր ստանալու առավել հեշտ, էժան ու շրջակա միջավայրի համար անվնաս միջոց գտնել: Բազմաթիվ փորձերից հետո նրանք կարողացան ստեղծել ծովի ջրի աղազերծման նոր մեթոդ՝ արեգակնային էներգիայի օգտագործմամբ:

2004թ. նրանց ծրագիրը զարմացրեց իրենց ազգային EXPLORA_CONICYT գիտաժողովի դարավորներին: Նիմա երիտասարդ գյուտարարները իրենց գյուտը գործի են դրել՝ ավելի մեծ մասշտաբով, որը հնարավորություն է տալիս արտադրել ավելի շար ջուր ավելի քիչ ժամանակում: Աշակերտները ցանկանում են սովորեցնել հյուսիսային Չիլիի բնակիչներին օգտագործել իրենց գյուտը, որպեսզի նրանք կարողանան արտադրել ավելի շար աղազերծված ջուր՝ խմելու եւ հացահատիկ աճեցնելու նպատակով:



Լուսանկարը՝ CONICYT Chile-ի

(2) Կատարիչի հեղափոխություն


Անհրաժեշտությունը կամ հիմնախնդիրը որոշելուց եւ այն լուծելու նպատակով օգտակար գյուրի մասին մտածելուց հետո, ժամանակն է սկսել հեղափոխությունը: Գորիչ այն ամենը, որ անհրաժեշտ է իմանալ ձեր գաղափարին առնչվող գիտության եւ տեխնոլոգիայի վերաբերյալ:

Դասագրքերը չեն պարունակում այն ողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է բո հեղափոխության համար: Գորիչ լրացուցիչ, ավելի հարկանշական տեղեկատվության աղբյուրներ տեղի գրադարանում եւ ինտերնետում: Մի՛ ամաչիր խորհուրդ հարցնել ուսուցիչներից եւ գրադարանավարներից:

Գյուրարարի նկարագրություն. Յանչեն Յգյու

Տասնինը տարեկան Յանչեն Յգյուն Չինաստանից ցանկանում էր ստեղծել ավելի արագագործ եւ բարձրորակ եռաչափ համակարգչային գրաֆիկա: Նա ցանկանում էր բարելավել մանրամասները եւ կրճատել այդ նկարները ստեղծելու համար պահանջվող ժամանակը: Իր նպատակին հասնելու համար Յգյուն ստիպված էր չափազանց շատ սովորել մաթեմատիկա եւ համակարգչային ծրագրավորում: Նա հասկացել էր, որ դրանք կարելու գործիքներ են, որոնք կօգնեն իր նպատակին հասնելու գործում:

Յգյուի ջանքերը փոխհատուցվեցին. 2004թ. նա Intel International Science and Engineering պոնավաճառում շահեց առաջին երեք մրցանակներից մեկը (50,000 ԱՄՆ դոլար եւ բարձր գործառնության համակարգիչ): Յգյուի նախագծած մեթոդը կարող է օգտագործվել 3-D խաղերի, վիրտուալ իրականության, բժշկական վիզուալիզացիայի համակարգերում եւ թռիչքի նմանակիչներում:



Լուսանկարը՝ Intel Corporation-ի

(3) Կարարի փորձեր եւ միտքը բաց պահիր

«Ես անհաջողություն չեմ կրել: Ես գրել եմ 10,000 ձեռ, որոնք պիտանի չեն»:

«Նեց նրա համար, որ ինչ-որ բան այնպես չէ, ինչպես պլանավորել ես, որ անի, դեռ չի նշանակում, որ այն պիտանի չէ»:

- Թոմաս Ալվա Էդիսոն

Երբ արդեն կարարել ես հետազոտությունը, սկսիր փորձեր կարարել եւ հարմարեցնել քո գյուրը, մինչեւ որ այն աշխարհի ինչպես պետք է: Նիշիր, պետք է գրառումներ կարարել քո փորձերի նկարագրությունների, նկարների եւ վերջնական գյուրի մասին:

Կարեւոր է համբերարար եւ հասարակամ լինել: Մի հուսահարվիր, եթե սկզբում հաջողության չհասնես: Նիշիր, որ շար գյուրարարներ բազմիցս ձախողվել են, նախքան վերջապես ցանկալի արդյունքին հասնելը:


Նիշիր նաեւ միտքը բաց պահել այս փուլում: «Միայն» փորձերը կարող են գերազանց եւ անսպասելի օգուրներ բերել: Եթե փորձը ձախողվում է, արդյունքին նայիր այլ աչքերով. Կարո՞ղ ես գրնել մեկ այլ կիրառում այդ «ձախողված» արդյունքի համար:

Գյուրի նկարագրություն. Post-It Notes

1968 թ. դոկտոր Սպենսեր Միլվերը, 3M ընկերության հեղափոխող գիտնականը, փորձեց ավելի որակյալ սոսինձ ստեղծել ընկերության մածուցիկ երիզների համար: Ավելի լավ սոսինձ ստանալու փոխարեն, նրա փորձերի վերջում չափազանց թույլ սոսինձ ստացվեց: Այս թույլ սոսինձը, այնուամենայնիվ, առանձնահատուկ էր, քանի որ այն հնարավոր էր մեկ անգամից ավելի օգտագործել եւ կաշուն նստվածք չէր թողնում, երբ հեռացնում էին մակերեսային վրայից: 1970 թ. Միլվերը որոշեց արտոնագրել այդ յուրահատուկ սոսինձը, չնայած դեռ վստահ չէր, թե ինչ է անելու դրա հետ:

Չորս տարի անց, Արտ Ֆրայը՝ Միլվերի գործընկերներից մեկը, գտավ այդ «ձախողված» փորձի հետեւանքով ստացված թույլ սոսինձի գործածության կարարյալ ձևը: Ֆրայը հոգնել էր իր շարականների գրքից անընդհար ընկնող թղթի կտոր- էջանիշերից: Մի օր Ֆրայը մտածեց, որ Միլվերի թույլ սոսինձը գուցե օգնի էջանիշը պահել ընկնելուց, միեւնույն ժամանակ թույլ պատվ այն հեշտությամբ հեռացնել, առանց գիրքը վնասելու: Եվ չսխալվեց:

Կարճ ժամանակ անց սկսվեց այսօր մեզ հայտնի Post-It... կաշուն թերթիկների արտադրությունը: Այդ թերթիկներն այժմ աշխարհով մեկ օգտագործվում են միլիոնավոր մարդկանց կողմից, բայց դրանք երբեք գոյություն չէին ունենա, եթե մի գյուրարար չհասկանար, որ ձախողված փորձի արդյունքները մի գեղեցիկ օր կարող են անսպասելի օգտագործվել:



Լուսանկարը՝ 3M-ի

(4) Դիմիր արտոնագրի համար


Ինչպես արդեն տեսանք, արտոնագրի համար դիմելու գործընթացը կարող է երկարատև եւ բարդ լինել, բազմաթիվ գյուրարարներ իրավաբաններ են վարձում այս փուլում իրենց օգնելու համար: Մի վիսարվիր դրանից: Շատ օրինակներ կան, երբ երիտասարդները հաջողությամբ արտոնագրեր են ստացել իրենց գյուրերի համար: Նիշիր, թե քո գյուրի արտոնագրային պաշտպանության դեպքում ինչպիսի օգուտներ կունենաս եւ ինչի կհանգեցնեն ռիսկերը՝ չարտոնագրելու դեպքում:

Երբ արդեն ունես աշխատող գյուլ, ինտերնետում փնտրիր, արդյո՞ք կան ուրիշ մարդիկ, ովքեր նմանապիպ գյուլ են արել: Կարող ես փնտրել՝ օգտագործելով քո երկրի արտոնագրային գրասենյակի կայքը, ԱՄՊ-ի պաշտոնաթերթը կամ էլ ինտերնետի որոնման որևէ նորմալ կայք: Եթե վստահ ես, որ քո գյուլը բավարարում է արտոնագրաունակության երեք պայմանները եւ կարող է փող բերել շուկայում, խորհրդակցիր արտոնագրային իրավաբանի հետ եւ դիմիր արտոնագրի համար:

Երիտասարդ գյուլարարի նկարագրություն. Ջենի Լուու

Երբ դեռ բավականին փոքր էր, Ջենի Լուուն օգտվում էր պլաստմասե ոտնակով աթոռակից, որ հասնի լոգասենյակի լվացարանին: Չնայած իր օգտակարությանը, աթոռակն այնքան էլ հասարարուն չէր եւ մեծ տեղ էր զբաղեցնում փոքրիկ լոգասենյակում: Երբեմն էլ Ջենիի հայրը կոտրում էր աթոռակը, երբ սխալմամբ ոտքը դնում էր վրան: Դեռ մանկապարտեզում Ջենին որոշեց լուծել այդ խնդիրը: Տեղի երկաթեղենի պահեստից վերցնելով փայտ, պրուտակներ, ծխնիներ եւ մագնիսներ, նա սրեղծեց ծավվող աթոռակ. Աթոռակը բացվում էր՝ հնարավորություն տալով Ջենիին եւ նրա քրոջը հասնել լվացարանին, իսկ ավարտելուց հետո կարող էին նորից ծալել աթոռակն այնպես, որ այն մեծ փարածություն չէր զբաղեցնում փոքրիկ լոգասենյակում:

Տեղական գյուլարարների ասոցիացիայի անդամ ընկերները հորդորեցին Ջենիին իրավաբան վարձել եւ արտոնագրի հայտ ներկայացնել: Իրավաբանը օգնեց Ջենիին արտոնագրային հայտի ներկայացման գործում (ներառյալ մանկական աթոռակի գծանկարն ու համառոտ նկարագրությունը կազմելը): 1992թ. 11 փարեկան հասակում Ջենին ստացավ ԱՄՆ #5,094,515 արտոնագիրը իր «Ծավվող ոտնակ պահարանների դռների համար» գյուլի շնորհիվ:



Լուսանկարը՝ USPTO-ի

(5) Մտեր մրցակցության մեջ

Գիտական կամ գյուտարարական մրցակցության մեջ մրմնելը հիանալի ձեւ է պոնտենցիալ ներդրողներին եւ սպառողներին քո գյուտը ցույց տալու համար: Նարցրու քնական գիտությունների քո ուսուցչին տեղական կամ ազգային մրցությունների մասին:

Եթե հաջողություն ունեցար այդ մրցությունում, թեկնածությունդ կառաջադրվի քո գյուտը միջազգային որեւէ մրցություն ցուցադրելու համար: Այդ մրցությունը քեզ հնարավորություն կտան ճամփորդել այլ երկրներ եւ հանդիպել քեզ հասակակից գյուտարարների հետ:

Միջազգային մրցությունում երիտասարդ գյուտարարները շահել են դրամական պարգեւներ, ստացել են թոշակներ, կրթաթոշակներ եւ հետագա ճամփորդության հնարավորություններ: ՄՄՆԿ-ն նույնպես ոսկե մեդալներով է պարգեւատրում երիտասարդ գյուտարարներին ամբողջ աշխարհում տեղի ունեցող միջոցառումների ժամանակ:

Նիշիր, այնուամենայնիվ, որ մրցությունն ավելի շատ սովորելու, քան հաղթելու համար են: Գյուտարարության գործընթացի հետազոտական եւ փորձարարական աստիճանները քեզ չափազանց շատ բան կսովորեցնեն քո գյուտի առարկայի մասին: Մրցութին մասնակցելը քեզ կտա նաեւ հաղորդակցմանն անհրաժեշտ հմտություններ: Սովորաբար, պահանջվում է, որ գյուտի մասին տեղեկատվությունը մրցութին ներկայացվի գրավոր: Դու պետք է նաեւ մրցութի ժամանակ դատավորներին բացատրես եւ ցուցադրես քո գյուտը: Մրցութի ընթացքում այլ մարդկանց հետ քո գյուտի մասին զրույցները քեզ կօգնեն հետագայում, երբ որոշես վաճառել այն: Մրցությունը հնարավորություն են տալիս նաեւ իմանալ, թե ինչպես են ուրիշներն ընկալում քո գյուտը, եւ թե անհրաժեշտության դեպքում ինչպես կարող ես այն դարձնել ավելի հետաքրքիր:

Քո գյուպը մրցութի ներկայացնելու մասին միպքն անգամ կարող է սարսափելի թվալ, սակայն իրականում շար երպասարդ գյուպարարներ անմոռաց հիշողություններ ունեն այն մրցությունների մասին, որոնց մասնակցել են: Ներպքրքրված մեծահասակ եւ համամիպ երիպասարդ գյուպարարների հեպ քեզ հուզող եւ լուծման կարիք ունեցող հիմնախնդրի մասին գրուցելու համար, իսկապես արժե ջանք չխնայել: Վերջապես, մի հուսահապվիր եթե նույնիսկ չես հաղթել մրցություն: Երիպասարդ շար գյուպարարներ հիանալի եւ արպոնագրաունակ գյուպեր են հայտնագործել՝ նույնիսկ չհաղթելով մրցություն:

Գյուպարարի նկարագրություն. Ռյան Պապերսոն

2001թ. 17-ամյա Ռյան Պապերսոնը ԱՄՆ 50,000 դոլարանոց կրթաթոշակ շահեց Intel International Science and Engineering փոնավաճառում: Նրա «Բրայլի ձեռնոց» (Braille Glove) գյուպը շարժումների լեզուն թարգմանում է փեքսի, փորձելով օգնել խու մարդկանց ավելի լավ հաղորդակցվելու նրանց հեպ, ովքեր չեն կարող հասկանալ նշանների լեզուն:

Մամուլը նույնքան ազդված էր Ռյանի գյուպով, որքան դապավորները: *Time Magazine*-ի 2002թ. նոյեմբերի 18-ի համարում փպագրվեց Ռյանի գյուպի նկարը եւ դրա նկարագրությունը որպես փարվա լավագույն գյուպերից մեկը:



Լուսանկարը՝ Intel Corporation-ի

Նշումներ երբասարդների համար կազմակերպվող միջազգային գիտական և գյուտարարական մրցույթներին

◆ **Intel International Science and Engineering Fair (ISEF)**

Նիմնադրվել է 1950թ. և մեծ մասամբ ֆինանսավորվում է Intel կորպորացիայի կողմից: Միջազգային այս տոնավաճառն անց է կացվում ամեն տարվա մայիսին Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

<http://www.sciserv.org/isef>

◆ **The European Union Contest for Young Scientists**

Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմակերպվող ամենամյա միջոցառումը միավորում է եվրոպական և որոշ ոչ եվրոպական հյուր երկրների երիտասարդ գիտնականներին և գյուտարարներին:

<http://europa.eu.int/comm/research/youngscientists/index2.htm>

◆ **Young Inventors Awards**

Hewlett Packard Asia Pacific և Far Eastern Economic Review-ի կողմից ֆինանսավորվող այս մրցույթը 2000թ. սկսած բացահայտում է ասիական տարածաշրջանի համալսարանական ուսանողների նորարարական ոգին:

http://www.feer.com/yia/YIA_main.html

◆ **EUREKA - World Exhibition for Innovation, Research and New Technology**

Ամենամյա այս ցուցահանդեսը կազմակերպվում է Բելգիայի առևտրի պալատի կողմից և ունի «Երիտասարդ գյուտարարի մրցանակ» ծրագիրը, որը նախատեսված է հատկապես երիտասարդ տաղանդներին (25 տարեկանից ցածր) խրախուսելու համար:

<http://www.eureka-international.com>

International Exhibition of Inventions, New Techniques and Products

- ◆ Ամենամյա այս միջոցառումը ֆինանսավորվում է Շվեյցարիայի Դաշնային կառավարության, պետության և Ժնև քաղաքի կողմից: Այս ցուցահանդեսում տրվող բազմաթիվ մրցանակների մեջ են մտնում ՄՄՆԿ-ի մրցանակները, որոնց մեջ կա նաև ոսկե մեդալ՝ լավագույն երիտասարդ գյուտարարի համար:

<http://www.inventions-geneva.ch/gb-index.html>

(6) Առևտրայնացրու քո գյուտը

Աշխատունակ գյուտ սրեղծելու եւ արտոնագրելու համար ներդրված հսկայական ջանքերից հետո ամոթ է, որ բազմաթիվ գյուտեր դրանից հետո ընթացք չեն ստանում: Նիշիր, որ գյուտարարները կարող են փող վաստակել միայն այն դեպքում, երբ մարդիկ գնեն նրանց գյուտերը: Առևտրականորեն հաջող գյուտերը դառնում են **նորարարություններ**, որոնք փոխում են մարդկանց կարարած գործողությունների ձևը:

Աշխատունակ գյուտ սրեղծելը, որը կարող է օգտակար լինել մարդկանց, եւ դրա արտոնագրումը մրցանակը շահելու համար արված առաջին քայլերն են միայն: Եթե ոչ ոք չիմանա գյուտի մասին, ոչ ոք չի գնի այն, որքան էլ որ գյուտը լավը լինի:

Ինչպես վերետում տեսար, գիտական եւ գյուտարարական տոնավաճառները գերազանց հնարավորություններ են ընձեռում քո գյուտը ի ցույց դնելու եւ լրավորության ուշադրությունը հրավիրելու համար: Գյուտը լիցենզավորելը անփոխարինելի միջոց է փող վաստակելու համար՝ ներդրողների միջոցով արտադրության ծախսերը ծածկելով եւ շուկայի մասնագետների միջոցով վաճառքը հոգալով: Քո երկրի փոքր բիզնեսին աջակցող կենտրոնը կարող է օգնել քեզ շփվելու պոտենցիալ լիցենզատուների հետ քո սեփական գյուտը առևտրայնացնելու համար: Տեղեկատվության համար կարող ես այցելել նաեւ ՄՄՏԿ-ի փոքր և միջին ձեռնարկություններին վերաբերող ինֆերմեյալին կայքերը.

<http://www.wipo.int/sme>

Զգուշացի՛ր.


Արդեն տեսար որ գյուտ անելն ու արտոնագրելը արագ եւ հեշտ գործընթացներ չեն. մի մրաձիր, որ քո գյուտերն առևտրայնացնելը ավելի արագ եւ հեշտ կլինեն: Այն գյուտարարները, ովքեր փորձում են այս փուլում կարճ ճանապարհ անցնել, կարող են խաբվել եւ ֆինանսական վնաս կրել կամ նույնիսկ վրանգել իրենց գյուտը: Ուշադիր եղիր նախքան քո գյուտը լիցենզավորելու կամ առևտրայնացնելու մասին որեւէ համաձայնագիր ստորագրելը:

Երիտասարդ գյուղատնտեսական արտադրություն. Սվեն Զիգլ

Այս երիտասարդ գյուղատնտեսական արտադրությունն անհանգստացնում էր օդի եւ ջրի աղտոտումը եւ անտառների ոչնչացումը, որը թղթի պատրաստման նպատակով կատարվող փայտանյութի զանգվածի փափկացման եւ գունաթափման գործընթացների հետեւանք էր: Այս հիմնախնդրի լուծմանը նպաստելու նպատակով Սվենը որոշեց հնարել փայտանյութի զանգվածի արտադրության նոր, շրջակա միջավայրի համար անվնաս գործընթաց՝ փայտի փոխարեն օգտագործելով ծղուկ, եղեգ եւ կանեփ:

Սվենի՝ զանգվածի բնական փափկացման գյուղը մի քանի մրցանակ շահեց, ներառյալ 1995թ. երիտասարդ գիտնականների՝ Եվրոմիության կողմից կազմակերպված մրցույթում առաջին տեղը: Շատ չանցած Սվենը ստացավ ազգային արտոնագիր, իր գյուղի համար միջազգային արտոնագիր ստանալու հայր ներկայացրեց եւ հոր օժանդակությամբ 1997թ. հիմնեց իր սեփական ընկերությունը: Նա մշակեց նաեւ մանրամասն բիզնես պլան՝ ներդրողներին հրապուրելու համար եւ դիմեց Նարավային Աֆրիկայում փայտանյութ արտադրողներին (որտեղ փայտը բավարար չէ թղթի արդյունաբերության համար) պարզելու համար, արդյո՞ք նրանց կհետաքրքրի իր գյուղը:

Սվենը շրջակա միջավայրի համար անվնաս պայմաններում ցածր գնով թուղթ արտադրող իր Natural Pulping® ընկերության գործադիր տնօրենն է, ուր աշխատում է 25 մարդ:



Լուսանկարը՝ Natural Pulping® AG-ի

Խաղ - Արտոնագրային ճամփորդություն

Վերանայիր այն ամենը, ինչ սովորեցիր արտոնագրերի եւ գյուղերի մասին, սեղանի այս խաղի միջոցով:

Խաղալու համար.

- 1) Գտիր մի փոքիկ գյուղի նմուշ, որ ներկայացնի քեզ խաղի մեջ կամ կտրիկ 49 էջի վրա գտնվող փոքր գյուղերի նկարները:
- 2) Մերաղադրամը վեր նետելով վիճակ գցիր: Նախապես ընտրիր, թե մերաղադրամի որ կողմը թույլ կտա քո գյուղին երկու վանդակ առաջ գնալ եւ որ կողմը թույլ կտա երեք վանդակ առաջ գնալ:
- 3) Խաղը շահելու համար դու պետք է հասնես վերջին վանդակին ճշգրիտ թվով: Նակառակ դեպքում, երբ հասնես վերջին վանդակին, գնա դեպի ետ՝ մնացած թվերով:



41)

40) Քո գյուղն այնքան հաջող է, որ վարձում ես 100 մարդ, որպեսզի գնեն այն արվադրել - գնա 43

39)

38)

37) Քո արվոնագրված գյուղը բարձրացնում է գիտելիքները քո բնագավառում - գնա 41



36)



35) Քեզ հաջողվեց լիցենզավորել քո արվոնագրված գյուղը - գնա 38

34)

33) Ինչ-որ մեկը փեսել է քո արվոնագիրը եւ ցանկանում է ներդրումը արարել քո գյուղի մեջ - գնա 36

32)

31) Դու չես գովազդում քո գյուղը, ուստի ոչ ոք չի գնում այն - վերադարձիր 27

30) ԱՆՊ-ի շնորհիվ քո գյուղը պաշտպանվում է արբասահմանում - գնա 34



18)

17)

16)

15) Ինչ-որ մեկը գողանում է գյուղը, որը դու մոռացել ես արվոնագրել - գնա եր 9



14)

13)

12) Քո փորձերը հաջողվեցին-հիմա քո գյուղն աշխատում է - գնա 16

11)

10) Քո ձախողված փորձերից մեկը գործածելու լավ փնդ գտար, գնա 14

9)

8) Քո գյուղի փորձերը ձախողվում են- եր գնա 5

7)





42)

43) ՇՆՈՐԱՎՈՐՈՒՄ
ԵՆՔ!

Դու օգնեցիր
հանրությանը քո
արտոնագրված
գյուտով:



29)

28) Դու չես դիմել
այլ երկրներում
արտոնագրային
պաշտպանության
համար - գնա եր 24

27)

26) Դու շահել
ես քո արտոնա-
գրված գյուտի
անօրինական
օգտագործման
դեմ դավաճ-գնա
32

25) Քո երկիրը
Արտոնագրային
համագործակցու-
թյան պայմանա-
գրի անդամ է
- գնա 29



24)

19) Ներագա
ուսումնասի-
րությունից
պարզվում է,
որ քո գյուտը
նոր չէ - գնա
եր 13

20)

21)

22) Քո
կառավարությունը
քեզ արտոնագիր է
տրախս քո գյուտի
համար - գնա 27

23)



6)

5)

4) Դու ոգեշնչ-
ված ես գյուտ
անելու գաղափա-
րով՝ հիմնա-
խնդիրը լուծելու
համար - գնա
դեպի 7

3)

2)



Արտոնագրային ճամփորդություն

1) ՍՏԱՐՏ

Դու
հիմնախնդիր ունես
լուծելու...



ՎԵՐՋՆԱԿԱՆ



ՄՏՔԵՐ

Նոր արտադրանքներ եւ գործընթացներ հայտնագործելը, արտոնագրելը եւ առեւտրայնացնելը ոչ միշտ են դյուրին: Այնուամենայնիվ, դրանք շատ բան են սովորեցնում եւ մեծ քավականություն են պարճառում նրանց, ովքեր ընդունում են գյուրի հետ կապված մարտահրավերները:



Նորարարությունը Կրեյտի է ունենում, երբ մի նոր գյուր փոխում է որեւէ բան անելու եղանակը: Նորարարությունը առաջ է մղում գիտությունը, Կրեյտն ուղղիւմ եւ մարդկությանը, եւ սա ամենաբարձր պարգէն է, որ գյուրարարը կարող է սրանալ:

Օգտագործիր քո երեւակայությունը, գիտելիքները եւ խանդավառությունը՝ գյուրարարների նոր սերնդի մի մասնիկը դառնալու նպատակով: Բարելավիր մեր աշխարհը քո գյուրերով:



ԳՅՈՒՏԵՐԻ ԱՄՍԱԳԻՐ

Մեկ-երկու նախադասությամբ նկարագրիր հիմնախնդիրը, որը ցանկանում ես լուծել.

Թ-վարկիր քո հիմնախնդրի մի քանի հնարավոր լուծումներ.

1)

2)

3)

4)

5)

Ներագուրիք թո առաջարկած լուծումների բոլոր թեմաները/նյութերը: Յուրաքանչյուր առաջարկված լուծման համար թո ստացած փվյալները բաժանիր դրականի եւ բացասականի: (Դրական փվյալների օրինակներ կարող են լինել. լուծումը փեխնիկապես հնարավոր է, կամ նախափիպ ստեղծելու համար անհրաժեշտ բոլոր նյութերը հեշտությամբ ճարվում են: Բացասական փվյալների արդյունքներ կարող են լինել. ինչ-որ մեկն արդեն արտոնագրել է նմանափիպ մի լուծում, կամ նախափիպ կառուցելու համար նյութերը չափազանց թանկ են):

1) Դրական փվյալներ

Բացասական փվյալներ

2) Դրական փվյալներ

Բացասական փվյալներ

3) Դրական փվյալներ

Բացասական փվյալներ

4) Դրական փվյալներ

Բացասական փվյալներ

5) Դրական փվյալներ

Բացասական փվյալներ

Փորձիր եւ կառուցիր քո լուծման նախափայը: (Փորձարկումը սկսիր այն լուծումից, որն ունի հեղազոտության ամենաշատ դրական արժեքները եւ ամենաքիչ բացասական արժեքները: Փորձիր հաղթահարել հեղազոտության բացասական արժեքները: Օրինակ. կարող ես փոխարինել թանկարժեք նյութերը ավելի էժան այլընտրանքներով կամ բարելավել քո հեղազոտության ընթացքում գրած արտոնագրված լուծումը):

Գրանցիր փորձերի արդյունքները.

Ի՞նչ խնդիրների հանդիպեցիր քո փորձերի ընթացքում:

Ինչպե՞ս լուծեցիր այդ խնդիրները:

Կարողացա՞ր սպեղծել քո գաղափարի աշխատող նախապիպը: (Եթե այս լուծմամբ քո փորձարկումները չհանգեցրին նախապիպին, քո նախնական ցուցակից վերցրու մեկ այլ լուծում եւ նորից սկսիր փորձարկումներ կատարել: Նիշիր, որ պեպք է ուշադիր լինես. արդյո՞ք քո «ձախողված փորձը» առաջացրեց հեղափոխիչ արդյունք, որը կարող է այլ գործածություններ ունենալ):

Որքա՞ն լավ աշխատեց քո նախապիպը:

Կարո՞ղ ես այն ավելի բարելավել: Եթե այո, ինչպե՞ս:

(Շարունակիր փորձարկումները մինչեւ քո նախապիպը լավ աշխատի:)

Քո գյուտին անուն րո՞ւր.

Անսաթիվ.

Քո անունը եւ սպորագրությունը.

ԽԱՂԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Խաղ - Նին քաղաքակրթությունների գյուտերը



Օդապարուկներ - Նին շինական օդապարուկները հայրնի են որպես օդանավի ամենաառաջին ձևեր: Գրավոր աղբյուրների համաձայն, առաջին օդապարուկները պատրաստվել են ավելի քան 2000 տարի առաջ **Չինաստանում**: Այս օդապարուկները պատրաստվում էին փայտից և բավականին մեծ էին, որ կարողանային մարդուն օդ բարձրացնել: Թղթի գյուտից հետո (նույնպես տեղի է ունեցել Չինաստանում), թղթե օդապարուկները դարձան ավելի էժան և ավելի լայն օգտագործում գտան: Այսօր ողջ աշխարհով մեկ երիտասարդներն ու ծերերը շարունակում են հաճույք ստանալ այդ հին գյուտով:



Դահուկներ - Մինչ այժմ գիտնականների հայրնաբերած ամենահին դահուկները պատրաստված են եղել փայտից՝ ավելի քան 8000 տարի առաջ: Այդ դահուկները հայրնաբերվել են 1960-ականներին **Ռուսաստանում**, Ուրալյան լեռներում: Դահուկների առջևի ծայրերը քանդակված էին հյուսիսային եղջերվի գլխի տեսքով: Այս քանդակը խորհրդանշում էր ոչ միայն արագություն, այլև օգնում էր դահուկորդին հավասարակշռություն պահպանել և, անհրաժեշտության դեպքում, ծառայում էր որպես արգելակ:



Չյան ակնոց - **Այլասկայում** էսկիմոսների նախնիները մոտ 2000 տարի առաջ հորինել էին փայտից ձյան ակնոց: Նրանք հագնում էին այդ ակնոցը կուրացնող ճերմակ ձյան հետեւանքները կանխելու նպատակով (աչքերը կարող են վնասվել ձյան սպիրակությունից անդրադարձվող արեւի լույսից): Չյան ակնոցն ունի շար մեղ ճեղքեր աչքերի համար և ապահովում է բավականին պարզ համայնապարկերով պրոտեկցիոն, երբ այն կիպ դնում են դեմքին: Մա չափազանց կարեւոր առավելություն էր փայլա որսորդության ընթացքում, քանի որ ձյան ակնոցը թույլ էր փայլա էսկիմոսներին հետեւել իրենց որսին առանց գլուխներն այս ու այն կողմ թեքելու (մի շարժում, որը նախագուշացնում էր կենդանիներին և փախցնում նրանց):



Փարոս - Առաջին հայրնի փարոսը կառուցվել է մոտավորապես Ք.ա. 280թ. Ալեքսանդրիայի նավահանգստի, (**Եգիպտոս**), Փարոս կղզում: Փարոսը, որը հայրնի էր որպես Ալեքսանդրիայի Փարոս, ոչ միայն օգտակար գյուտ էր, այլև համարվում էր Նին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը: Փայտից և մարմարից պատրաստված փարոսն ուներ ավելի քան 120 մետր բարձրություն, իսկ նրա հղկված բրոնզե հայելիները արտացոլում էին մեծ, մշտապես վառվող կրակի լույսը, որպեսզի նավերին ուղղորդեին դեպի նավահանգիստ:



Բումերանգ - Այս կոր ձողերը, որոնք վերադառնում են նետողի մոտ, հայտնագործել են **Ավստրալիայի** հնաքնակներն ավելի քան 10000 տարի առաջ: Բումերանգներն օգտագործվում էին որպես որսորդության եւ պատերազմի գործիք: Այսօր դրանք ամենուր օգտագործվում են սպորտում:



Անիվ - Մարդկությանը հայտնի ամենահին անիվը գտնվել է ժամանակակից **Իրաքի** մի մասում, որը հայտնի է որպես անսրիկ Մեսոպոտամիա: Այդ անիվն ավելի քան 5000 տարեկան է: Նայտնագործելուց հետո սկզբում անիվներն օգտագործվում էին կավ մշակելու նպատակով (բրուտի անիվ), իսկ ավելի ուշ տեղադրվեցին սայլերի վրա, որոնք օգտագործվում էին ծանր առարկաներ տեղափոխելու համար: Այսօր մենք դեռ անիվներն օգտագործում ենք բրուտագործության եւ փրանսպորտի մեջ: Անիվները կարելու են նաեւ ժամացույցների եւ շաք այլ մեխանիզմների աշխարհների համար:



Շոկոլադ - Մոտ 2000 տարի առաջ հին **Մեքսիկայում բնակվող** ացտեկները հնարեցին արքայական շոկոլադը: *Բոնոնոթլ* ըմպելիքը շոկոլադի, չիլիական պղպեղի, եգիպտացորենի ալյուրի եւ ջրի բավականին թանկարժեք խառնուրդ էր: Այս կծու խառնուրդը իսպանացի նվաճողների ճաշակով չէր, եւ նրանք ավելի ուշ ձեւափոխեցին այն՝ չիլին փոխարինելով շաքարով, դարչինով եւ վանիլով:

Խաղ - Գպիր գյուտարարին (ԽԱՂԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ)



Գաբրիել Ֆարենհայթ - սնդիկային ջերմաչափ եւ ջերմաստիճանային սանդղակ
Պրուսացի ֆիզիկոս Գաբրիել Ֆարենհայթը 1714 թ. հայտնագործեց սնդիկային ջերմաչափը: Չնայած Գալիլեո Գալիլեյը 100 տարի դրանից առաջ հայտնագործել էր ջրային ջերմաչափ, որն այնքան ճշգրիտ չէր, որքան Ֆարենհայթի սնդիկային ջերմաչափը: Գաբրիել Ֆարենհայթը հայտնագործել է նաեւ ջերմաստիճանային սանդղակ - Ֆարենհայթի սանդղակը - որը նա օգտագործում էր հեղուկների եռման աստիճանները որոշելու համար:



Ալեսանդրո Վոլտա - մարտկոց
1800 թ. իրալացի կոմս Ալեսանդրո Վոլտան հայտնագործեց հասարակ մեկկրական հոսանք ստեղծելու առաջին մեթոդը: Նրա մարտկոցը, որը կոչվում էր Վոլտայի կույտ, բաղկացած էր պղնձի եւ ցինկի սկավառակների կույտից, որոնք առանձնացված էին միմյանցից աղի լուծույթի մեջ խոնավացված սրվարաթղթի սկավառակներով: Էլեկտրականությունը հոսում էր վերելի եւ ներքեի սկավառակները միացնող մետաղալարի միջով: Այս մարտկոցը մարդկության պատմության մեջ էներգիայի առաջին շարժական աղբյուրն էր, եւ առանց դրա էլեկտրականություն պահանջող շաք այլ գյուտեր անհնար կլինեին ստեղծել:

Ի պարիվ այս մեծ հայրնագործության, էլեկտրականության չափման միավորը՝ վոլտը, կոչվեց կոմս Վոլտայի անունով:



Լուի Բրայլ - գրելու համակարգ կույրերի համար

Մի 12-ամյա ֆրանսիացի տղա Լուի Բրայլի անունով 1812 թ. հայրնագործել է Բրայլի կոդը: Լուին տարված էր այդ կոդի մտահղացմամբ, երբ նախկին զինվոր Չարլզ Բարբիերը այցելեց դպրոց, որ ցույց տա իր «գիշերային գրության» գյուտը: Չարլզը հայրնագործել էր 12 ուռուցիկ կետերից բաղկացած կոդ, որպեսզի զինվորները շոշափելով կարդային ռազմական լուրերը գիշերով՝ առանց որեւէ լույսի: Լուին պարզեցրեց Չարլզի կոդը՝ ուռուցիկ 12 կետերը հասցնելով 6-ի: 15 տարեկան հասակում Լուին հրատարակեց իր առաջին Բրայլի գիրքը եւ երկար տարիներ շարունակեց աշխատել կոդի վրա՝ ավելացնելով նշաններ երաժշտության եւ մաթեմատիկայի համար: 1868 թ. Լուիի կոդն արդեն տարածված էր աշխարհով մեկ, եւ աշխարհի գրեթե բոլոր երկրներում այսօր կույրերը օգտագործում են այն որպես հաղորդակցման միջոց:



Կոմսը Սենդվիչից - հացի շերտեր՝ մսով, պանրով եւ այլնով

Ջոն Մոնտեգյուն, Սենդվիչի չորրորդ կոմսը, 18-րդ դարի անգլիացի կրթված քաղաքագետ էր, սակայն նրան հիշում են որպես սենդվիչ հնարողի: 1762 թ. մի օր կոմսը թղթախաղով էր տարված եւ, չնայած սոված էր, չէր ցանկանում հեռանալ խաղասեղանից: Այդ խնդիրը լուծելու համար նա խնդրեց ծառայապետին իր համար մսի եւ հացի շերտեր բերել: Նկատ նա մսի շերտերը դրեց հացի շերտերի արանքում եւ սկսեց ուտել խաղալու ընթացքում: Սենդվիչի սկզբունքը վայրկենապես դարձավ մոդայիկ եւ այն ցայսօր շարունակում է մնալ որպես սիրված ուտելիք ողջ աշխարհում:



Մելիքա Բենց - սուրճի պատրաստման մեթոդ եւ ֆիլտր

Գերմանացի տնային տնտեսուհի Մելիքա Բենցը սուրճ շաք էր սիրում: Մակայն նրան դուր չէր գալիս աղացած հատիկներն ու դառը յուղերը, որոնք ավանդական եղանակով լցվում էին եռացած ջրի մեջ: Նա մտածեց, որ սուրճն ավելի համեղ կլինի, եթե կարողանա կանխել աղացած սուրճի հատիկների եւ դառը յուղերի մուտքը՝ դրանք քամելու միջոցով: Նա փորձեց մտահղացումն իրականացնել բազմաթիվ նյութերով եւ մեթոդներով, մինչեւ վերջապես համոզվեց, որ իր որդու տղայի ծծողական թուղթը՝ սկավառակի ձեւով կտրված եւ դրված

անցքեր ունեցող մեքենայա թեյնիկի հագրակին, ցանկալի արդյունք է փալիս: Նրա քամիչները պատրաստում էին հագեցած սուրճ առանց դառնության եւ հափիկների: 1908 թ. փիկին Բենցը արտոնագրեց իր գյուրը եւ ամուսնու հետ հիմնադրեց մի ընկերություն: Ավելի քան 100 փարի ամբողջ աշխարհում շափ ընտանիքներում առավոտյան սուրճ պատրաստելու նպատակով դեռ օգտագործում են *Melitta®* եղանակը եւ քամիչները:



Լեվի Սփրաուս - կապույտ ջինս

Լեվի Սփրաուսը՝ չոր ապրանքների պահեստի սեփականատերը եւ դերձակ Ջեյքոբ Դեյվիսը, 1837թ. սրացան արտոնագիր առաջին կապույտ ջինսի համար: Շավարը ինքնատիպ էր, որովհետեւ Դեյվիսը մեքենայա գամեր էր դրել գոտու գրպանների անկյունների եզրերին եւ բացվածքի ներքեւում: Սկզբնական շրջանում սրեղծված ջինսը որպէս աշխատահագուստ բաց կապույտ կամ դարչնագույն էր: Դարչնագույնը փափուկ եւ հարմար չէր սրացվում, ինչպէս բաց կապույտը, ուստի այն արտադրությունից դուրս եկավ: Կապույտ ջինսը շարունակում է մնալ մոդայիկ եւ դարձել է ամերիկյան խորհրդանիշ:



Ջորջ Իսթման - լուսանկարչական ապարատ՝ պրոֆեսիոնալ ժապավենով

Երբ 1800-ականների սկզբին հայտնագործվեց լուսանկարչությունը, նյութերը թանկ էին, իսկ նկարահանումը՝ բարդ, որի հետեւանքով լուսանկարչությամբ զբաղվում էին միայն պրոֆեսիոնալները: Ամերիկացի լուսանկարիչ եւ արդյունաբերող Ջորջ Իսթմանը կիրուկ փոխեց իրավիճակը՝ հնարելով առաջին չոր, թափանցիկ եւ սահուն պրոֆեսիոնալ ժապավենը (արտոնագրվեց 1888 թ.) եւ առաջին խցիկը՝ հարուկ նախագծված պրոֆեսիոնալ ժապավենի համար (արտոնագրված 1888թ.): Ձեռքի Kodak լուսանկարչական ապարատը պատրաստի վիճակի է բերվում նրա մեջ նախապէս ժապավեն դնելով 100 նկարի համար: Նկարելուց հետո, հաճախորդները լուսանկարչական ապարատը վերադարձնում էին Իսթմանի Kodak ընկերությանը: Ընկերությունը հանում, փայում էր նկարները, լուսանկարչական ապարատի մեջ նորից ժապավեն դնում եւ այդ ամենը նորից ետ էր ուղարկում հաճախորդին: Ջորջ Իսթմանի Kodak ընկերության նշանաբանն էր. «Սեղմեք կոճակը, մնացածը կանենք մենք»:

Խաղ - ԱՏՊ դեմոնստրացիա




(1-ա) թվային կիթառ
WO 2004/064035



(2-ա) երկուսանի տեղաշարժում
WO 03/078110



(1-բ) թափանցիկ ներբաններով կոշիկ փոքրիկների համար
WO 00/47073



(2-բ) ոտք, որը հնարավոր է դարձնում նրա քայլերը անհարթ մակերեսային վրա
WO 03/068455




(1-գ) Թուրքիայում հայտնագործված անլար սպեղնաշար
WO 02/027457



Քրայոյի կարողությունը`
(2-գ) ճանաչել ձայնը
WO 01/72478




(1-դ) Նոր Զելանդիայից անհափականացված բացիկ
WO 2002/068209




(2-դ) ճանաչել դեմքը
WO 03/019475




(1-ե) ռուսական գլուխկոտրուկ WO 99/58213




(2-ե) գրուցել օգտագործողի հետք
WO 2004/051499



(1-զ) քաղցր խաղալիք Բրազիլիայից WO 03/086095



(2-զ) ցուցադրել զգացմունք
WO 02/076687



(1-է) գողությունը կանխող պարկ Նարավային Կորեայից
WO 01/10261



(1-ը) Գերմանիայից էներգիա խնայող լամպ WO 03/034466

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌ-ԱՐԱՆ

Առևտրայնացնել - Արտադրել, փարածել եւ վաճառել որեւէ արտադրանք կամ գործընթաց՝ օգուտ ստանալու նպատակով:

Նեղինակային իրավունք - Գրական եւ արվեստի ստեղծագործությունների համար ստեղծագործողներին տրվող իրավունք:

Նայրնագործություն - Որեւէ բան, որը գոյություն ունէր, բայց մինչ այդ հայրնի չէր:

Արդյունաբերական սեփականություն - Մտավոր սեփականության մաս, որը ընդգրկում է գյուտերը, ապրանքային նշանները եւ արդյունաբերական նմուշները:

Նորարարություն - Առևտրային առումով հաջող գյուտ, որը փոխում է որեւէ բան անելու եղանակը:

Մտավոր սեփականություն - Օրենքի ոլորտ, որը պաշտպանում է մտավոր գործունեության ստեղծագործությունները եւ բաժանվում է արդյունաբերական սեփականության ու հեղինակային իրավունքի:

Միջազգային որոնման զեկուցագիր - Ըստ ԱՆՊ-ի միջազգային արտոնագրային հայտ ներկայացնողների համար նախատեսված զեկուցագիր, որը մանրամասը նկարագրում է կոնկրետ գյուտի տեխնիկայի հայրնի մակարդակը:

Գյուտ - Ընդհանուր առմամբ նոր արտադրանք կամ գործընթաց, որը լուծում է որեւէ տեխնիկական հիմնախնդիր:

Գյուտարարական մակարդակ - Գյուտի մեջ նոր բնորոշ գիծ, որին համապատասխան տեխնիկական բնագավառում միջին գիտելիք ունեցող մարդը չէր կարող հանգել:

Լիցենզառու - անհատ, ում տրվում է լիցենզիա:

Արտոնագիր - Պաշտոնական փաստաթուղթ, որն ընդհանուր առմամբ պաշտպանում է գյուտը պատճենելուց, օգտագործելուց, փարածելուց կամ վաճառելուց առանց արտոնագրատիրոջ համաձայնության:

Արտոնագրային պահոց գրադարան - Գրադարան, որը պարունակում է որեւէ երկրի արտոնագրային բոլոր փաստաթղթերը եւ դրանք անվճար մատչելի է դարձնում հանրությանը:

Արտոնագրային իրավունքի խախտում - Արտոնագրված գյուրի չթույլատրված օգտագործումը, վաճառքը, արտադրությունը կամ տարածումը այն երկրում, որտեղ գրանցվել է արտոնագիրը:

Արտոնագրային լիցենզիա - Արտոնագրված գյուրի արտադրման, վաճառքի եւ/կամ տարածման պաշտոնական թույլտվություն:

Արտոնագրային որոնում - Արտոնագրային փաստաթղթերի որոնում տեխնոլոգիական ամենավերջին զարգացումներին տեղեկանալու նպատակով:

Արտոնագրատեր - Արտոնագրի սեփականատեր:

ԱՏՊ - Արտոնագրային համագործակցության պայմանագիր, որն ապահովում է միայն մեկ հայրով ավելի քան 120 երկրներում արտոնագրային հայր ներկայացնելու պարզ եղանակ:

Նախադիպ - Գյուրի աշխատող սկզբնական նմուշը, որը հետագայում կարող է վերարտադրվել:

Նանրության սեփականություն - Գյուրերը, նշանները, դիզայնը եւ արվեստի ստեղծագործություններ, որոնք կարող են ազատ օգտագործվել ցանկացած անձի կողմից, քանի որ չեն պահպանվում արտոնագրերով, ապրանքային նշաններով, արդյունաբերական նմուշներով եւ հեղինակային իրավունքով:

Տեխնոլոգիա - Գիտության գործնական օգտագործումը արդյունաբերության մեջ:

ՄՄՏԿ - Մրավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն- Միավորված Ազգերի մասնագիտացված գործակալություն հիմնադրված Ժնևում՝ արվեստագետների եւ գյուրարարների մրավոր սեփականության իրավունքները խթանելու նպատակով:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄՄԿ-ի կողմից հրատարակված հերթյալ անվճար գրքույկներն ապահովում են հեղափոխական արդյունաբերության գյուտերի և մրավոր սեփականության այլ ձևերի մասին: Կարող ես ներբեռնել դրանք www.wipo.int/publications կայքից: Կարող ես նաև հրատարակված օրինակ խնդրել՝ նամակ ուղարկելով publications.mail@wipo.int էլեկտրոնային հասցեով:

Նեղինակային
իրավունք



հրատ. թիվ 484

Գյուտեր




հրատ. թիվ 485

Ապրանքային
նշաններ




հրատ. թիվ 483

Մերփիր անցյալը,
Կերփիր ապագան
Արվեստը և հեղինակային
իրավունքը



հրատ. թիվ 935

ՄՄ քո սեփական
աշխարհը



հրատ. թիվ 907

Տանը գյուտի հետ



հրատ. թիվ 865

Ի՞նչ է մրավոր
սեփականությունը



հրատ. թիվ 450

Արվեստագեղարվեստի
հանդիսատեսին



հրատ. թիվ 922

Կերպելով
ապագան



հրատ. թիվ 917

Զգրելով
գեղեցիկին



հրատ. թիվ 498

Նշանի պատրաստում



հրատ. թիվ 900

Սպեղծագործական
արարահայություն



հրատ. թիվ 918

ԸՆՏՐՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Bender, Lionel. *Eyewitness Guides: Invention*. London: Dorling Kindersley, 1991.

Dyson, James and Robert Uhling Ed. *The Mammoth Book of Great Inventions*. London: Robinson, 2001.

European Commission, *Science, Our Future: 15 Years of the EU Contest for Young Scientists 1989-2003*. Luxemburg: Office of Official Publications of the European Communities, 2002.

Harrison, Ian. *The Book of Inventions: The Stories Behind the Inventions and Inventors of the Modern World*. London: Cassell Illustrated, 2004.

James, Peter and Nick Thorpe. *Ancient Inventions*. New York: Ballantine Books, 1994.

Karnes, Frances A. and Suzanne M. Bean. *Girls & Young Women Inventing: 20 True Stories About Inventors Plus How You Can Be One Yourself*. Minneapolis, MN: Free Spirit Publishing Inc., 1995.

Krebs, Robert. *Groundbreaking Scientific Experiments, Inventions & Discoveries of the Middle Ages and the Renaissance*. Westport, CT: Greenwood Press, 2004.

Krebs, Robert and Carolyn A. Krebs. *Groundbreaking Scientific Experiments, Inventions & Discoveries of the Ancient World*. Westport, Connecticut: Greenwood Press, 2003.

Les Chronologies de Maurice Griffe: Les Sciences et Techniques. Le Cannel: Editions T.S.H., 1997.

SHectman, Jonathan. *Groundbreaking Scientific Experiments, Inventions & Discoveries of the 18th Century.* Westport, Connecticut: Greenwood Press, 2003.

Tucker, Tom. *Brainstorm!/: The Stories of Twenty American Kid Inventors.* Canada: HarperCollins Canada Ltd, 1995.

Windelspecht, Michael. *Groundbreaking Scientific Experiments, Inventions & Discoveries of the 17th Century.* Westprt, Connecticut: Greenwood Press, 2002.

Windelspecht, Michael. *Groundbreaking Scientific Experiments, Inventions & Discoveries of the 19th Century.* Westprt, Connecticut: Greenwood Press, 2003.

ON-LINE ԱՂԲՅՈՒԻՐՆԵՐ

About, Inc: <http://inventors.about.com>

By Kids For Kids: <http://www.bkfk.com>

Enchanted Learning: <http://www.enchantedlearning.com/inventors>

The Lemelson Center for the Study of Invention and Innovation:
<http://invention.smithsonian.org/home>

Lemelson-MIT Program: Inventor of the Week Archive <http://web.mit.edu/invent/i-archive.html>

Smith College History of Science: Museum of Ancient Inventions
http://www.smith.edu/hsc/museum/ancient_inventions/

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Այս հրապարակությունը կարող է օգտագործվել որպես բնական գիտությունների ուսումնական ծրագրերի լրացուցիչ նյութ: «Մտածիր այդ մասին» բաժինները կարող են մեկնարկային լինել գյուրերի եւ արտոնագրերի վերաբերյալ դասարանային քննարկումների համար, իսկ «Արտոնագրային ճամփորդություն» խաղը նախագծվել է, որպեսզի աշակերտների խմբերը հնարավորինս հաճույքով կրկնեն իրենց սովորածը:

Ուսուցիչները կարող են նաեւ լրացնել այս հրապարակության մեջ եղած սրբանկարվությունը՝ աշակերտների հետ քննարկելով լուսաբանված որոշ գյուրերի գիտական սկզբունքները (օրինակ՝ գոգավոր եւ ուռուցիկ ապակիների համակցությունը հեռադիտակի մեջ եւ թերմոդինամիկայի օրենքները՝ կաթսան կաթսայի մեջ սառեցման համակարգում):

Աշակերտներին կարելի է հանձնարարել նաեւ ուսումնասիրել եւ գրել իրենց երկրի գյուրարարների մասին:

Ի վերջո, ուսուցիչները կարող են օգտագործել այս հրապարակությունը՝ խրախուսելու իրենց աշակերտներին, որ նրանք մասնակցեն գիտության փոնավաճառի մրցույթներին եւ օգտագործեն իրենց սրբանկարվածական ունակությունը՝ գյուրեր սրբանկարելու համար:

Այս հրապարակությունը կարելի է պատճենվել դասարանում աշխատելու համար:

Ցանկացած դիտողության, հարցերի եւ խնդրանքների համար առաջարկում ենք դիմել kids@wipo.int հասցեով:

Սույն հրապարակությունը թարգմանվել է և վերարտադրվել է հեղինակային իրավունքի իրավաբեր Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՏԿ) թույլտվությամբ՝ անգլերեն բնօրինակի հիման վրա: ՄՍՏԿ քարտուղարությունը պարտավորություն է պատասխանատվություն չի կրում թարգմանության կամ տվյալների որեւէ փոփոխության համար:

Լրացուցիչ փեղեկությունների
համար դիմեք ՆՆ Մտավոր
սեփականության գործակալություն

Նասցեն՝
Գլխավոր պողոտա,
կառավարական 3
Երևան 0010,
Նայասպանի Նանրապետություն

Նեռախոս
+37410 52 06 73

Ֆաքս
+37410 54 34 67

Էլ-փոստ
www.cright@aipa.am

**Կամ Մտավոր սեփականության
համաշխարհային
կազմակերպություն**

հնդեյալ հասցեով.
34, chemin des Colombettes
P.O. Box 18
CH-1211 Geneva 20
Switzerland

Նեռախոս:
+41 22 338 91 11

Ֆաքս:
+41 22 733 54 28

E-mail:
wipo.mail@wipo.int

Այցելեք ՄՄՆԿ www.wipo.int կայքը
և պարզիրեք ՄՄՆԿ էլեկտրոնային
գրախանութից www.wipo.int/ebookshop